

Մենք պարտական ենք մանրամասն ուսումնասիրութեամբ ծանօթացնել ժողովրդին դեմատվային հաստատութիւններէ ոգու և գործունէութեան հետ, իսկ այդ անհրաժեշտ է, որ մենք մօտիկից և գործնականապէս ծանօթանանք զմեզմովային կեանքին:

Ո՞րքանից.
Ռուսաստանի բազմաթիւ նահանգները մի քանի տասնեակ տարիներէ ի վեր վայելում են զեմատվային ինքնավարութեան բարեբերը: Զեմատվային Ռուսաստանում ունի այժմ իր պատմութիւնը. այդ պատմութեան էջերը լին են փայլուն և տխուր տողերով: Այդ պատմութիւնը հարուստ է փաստերով և թւերով. այդ պատմութիւնը ժողովրդական լաւ ոյժերի գործունէութեան մի խրատատու օրինակ և ծրագիր է:

Այս աղբյուրները պէտք է դիմենք մենք. դա մեզ շատ բան կ'աւելնէ:

Բժիշկ, ուսուցիչ, գիւղատնտես, ստաւրաւ և այլ բազմաթիւ մասնագէտներ և հասարակական գործիչներ Ռուսաստանի զեմատվային պատմութեան մէջ կը գտնեն հարուստ նիւթ իրանց ապագայ գործունէութեան համար, գործունէութեան, որը պէտք է նուիրված լինի երկրի և ժողովրդի շահերին. ծանօթանալ մօտիկից Ռուսաստանի զեմատվային ինքնավարութեան գործունէութեան հետ և ապա՝ պատրաստված տեսականապէս և գործնականապէս, մանկ ժողովրդի մէջ, որպէս զեմատվային գործիչներ—անա մեր ինտելիգենցիայի բարոյական պարտքը դէպի մեր երկիրը և աշխարհը ժողովուրդը, որի անուանից մենք միշտ խօսել ենք:

Ուրեմն ուսումնասիրենք:

Ա. Աթանասեան

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԱՂԵՏԻ ԶՈՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Մեծ-Ղարաբաղի մասին 44 ր. 70 կողմէ, որ ժողովրդական է Վերդիւնի Մանուէլեանցի ձեռքով հետեւալ անձնակցի. Հ. Աղա-տեան, Զ. Տէր Սիմէոնեան, Ե. Աղա-տեան, Ա. Շարաբեան, Ա. Շարաբեան, Ա. Իսահակեան, Դ. Սահակեան, Մ. Եսայեան, Դ. Ա. Եսայեան, Հ. Տէր-Գրիգորեան, Ա. Գրիգորեան 50-ական կողմէ, Լ. Մանուէլեան, Վ. Մանուէլեան, Վ. Թադիստեան, Ե. Շարաբեան, Տ. Յակովբեան, Ա. Նալբանդեան, Համբարձումեան, Մ. Իսահակեան, Վ. Աղա-տեան, Խ. Ա. Թադիստեան, Ս. Նալբանդեան, Համբարձումեան, Ս. Նալբանդեան, Վ. Աղա-տեան, Խ. Ա. Թադիստեան 1-ական բողոք, Զ. Տէր-Սիմէոնեան, Ս. Նալբանդեան, Վ. Աղա-տեան, Խ. Ա. Թադիստեան 50-ական կողմէ, Ա. Տէր-Գրիգորեան, մի ոմն, տիկին Մ. 30-ական բողոք, Ա. Մանուէլեան 5 ր., Մ. Մանուէլեան 40 կ., աւ-յայտ ոմն, Ս. Աղա-տեան 20-ական կ., Օ. Ա.

հարկէ, չէր կարող բողոքել ինչ որ ընդունել Ղարաբաղի ձախուժմանը այդ յանգումը յղացումներէ ճշտ գաղտնիքը: Նա չէին և Գաղիկի եկեղեցիներ ընդօրինակումով, իսկ ընդ-օրինակման գործի մէջ սեփական ստեղծագործութիւն, մաքր անկախ գործողութիւն սովորաբար չէ լինում կամ քիչ է լինում: Եւ ահա հակա շինութիւնը վերջացնելուց յետոյ տեսնում են, որ նա վատագույն է, որ առատաւոր չը պիտի կարողանայ դիմանալ վրայի ծանրութեան: Ուստի շատագուց են շինել մեծ նեցուկներ: Եւ այդ նեցուկները այժմ երևան են եկել ամբողջ, իրանց վիթխարի կազմով: Այս դրանք են արձանագրութեան մէջ յիշված սխալները, որոնք շինվել են 13 տարուց յետոյ:

Բայց չէ կարելի սակ թէ Գաղիկի եկեղեցիներ միտնեցան իր ընդօրինակութիւն է ամեն կողմից: Անցնին գոնէ զարգացնողակներ կողմից ինքնուրոյնութիւն է պահպանել. այստեղ այլ ևս ընդօրինակութիւն չէ, քանիզ կանգնել հարուստ ու շքեղ են, զարմացում են իրանց ներքինութեամբ նոյն իսկ Անիում, ուր այդպիսի գործերի մի անապառ ու անհուն հարստութիւն կայ:

Ղարաբաղի եկեղեցու մօտ բացված է մի մեծ ապարանք: Այդպիսի մի շինութիւն կը-ված է և Գաղիկի եկեղեցու: Պրոֆէսոր Մառ բացել է այդ շինութեան նախագիծը մի-այն: Դուրս է եկել մի հրաշալի զարդարուն դուռ, շարքված, փշուր-փշուր դարձած: Զարդերը կազմված են վեցթևեան աստղերից, որոնց մէջերը ներկայացնում են զատ զատ քանդակներ: Ինչ հարուստ, ինչ անապառ երկակայութիւն է ունեցել քանդակագործը. ինչ ձևեր, ինչ մանրամասն: Զարմանում ես, անվերջ նայում, զգում ես, որ այսպիսի

աւերան 5 կ., Վ. Աղա-տեան 45 կ., Թ. Զու-րաբեան, Տ. Վարդանեան 20-ական կողմէ:

ԱՌԵՐԱՆՈՒՄԻ ՎԱՅՐԻՑ

Նախիջևան, յուլիսի 21-ին
Մի շարք գիւղեր շրջակայ յետոյ, որոնց մասին կը տանք տեղեկութիւններ պարբերաբար, վերադառնալով քաղաք, ազդարանակութեան մէջ նկատեցինք արդէն անցած իրա-րացման նշաններ: Այդ օր մի անգամ ես առանց այն էլ յուզված մտքերը խռովել էին և սարսափի ջգտագրութիւններ տեղի ունեցել: Ինչ որ մի տեղից բողոքովին պատահաբար լսվում է հրացանի պայթոց. մի քայլէ մէջ, սարսափը տիրում է ամենքին, կայծայիլ ա-րագութեամբ շշուէլ անցնում է բոլորի մէջ. «էլի սկսվեց» բացակայելու են ամենքը, հա-յերը շտապում են եկեղեցու բակը, թուրքերի մի մասը կողպում է խառութիւնը, մի որոշ մաս էլ խմբով և յայտնի տեղերում, մի քանի տեղերից լսվում են արագոցներ, մի երկու հայերի վրա տարձնաակէն արձակում, բարեբախտաբար անցնում: Միակ վերաւոր յայտնվում է մի թուրք, որը ցոյց տալով ա-րեւմտ ձեռքը, մատնացոյց է լինում մի զին-ւորի վրա, որը իւր թէ զինակով վերաւորել է նրան սպանելու մտքով. հրացանը ընկնելուց նկատում են, որ արձակված չէ նա և որ թուրքի ձեռքի վերքը գնդակից չէ, այլ թրի կամ աւելի ճիշտ դանակի կտրած որոշ դե-տաւորութեամբ: Շուտով ամեն բան պարզ-վում է. զինւորը հայ է եղել, պէտք էր նրան զրպարտել և Նախիջևանից հեռացնել ապա-նախիջևանում եղած մի քանի հայ զինուորների վրա գնդակահարելու և նրանց քաղաքից հե-ռացնելու փորձեր մի քանի անգամ են տեղի ունեցել և այդ ջանքերը արդիւնք են ունեցել. Նորս ուղարկված 20 զինուորներից 8 ը հայեր են, մինչդեռ պոլիցիային կաշտի մէջ մա-նաւանդ գործողութիւններ, եղող թուրքերը հա-յիստ շարունակում են իրանց պաշտօնը: Եւ այս պաշտօնականները, ներկայ պայմաններում, այնքան անվստահի են, որ ուս թղթակիցը —Սիւմին—բաց է ի բաց առաջարկում էր, որպէս գրաւական խաղաղացման գործին, հե-ռացնել տեղացիներին պոլիցիային կազմից: Երջակայ գիւղերից յաճախ լսվում են յար-ձակումների նորանոր փորձեր: Ամբողջովին կողոպտված և բազմաթիւ դոներ տված Նորս գիւղի վրա 11-ին յուլիսի, թուրքերը նորից յարձակումն արձեցին, բայց յետ մղվելին: Յարձակումներ լինում են նաև քաղաք տե-րերի և նոյն իսկ կալերում գաղտնի գործերի գէղերի վրա, գողանալու և հրդեհելու նը-պատակով: Այսպէս յուլիսի 17-ի գիշերը թուրքերը յարձակվեցին Գիւմրի կալերի վրա և կրակ ձգեցին գիւղի հարուստ Յոնան Յա-րութիւնեան և Եղիշէ քանաւայի (հանգու-

շքեղութիւններով ծանրաբեռնված Անիի մէջ տնտեսու ևս բողոքովին նոր ինքնուրոյնութիւն: Տէր Աստուած, ինչպէս գիտէր անցնի հրաշակներով քաղաքը...

Նշանաւոր գիւտեր պիտուածքների մէջ դեռ չեն եղել: Իմ ժամանակ ալ, Մառ գառա մի բըրդեղալ բողոքով, զարդարված բարձրաբան-դակ նկարներով: Գառնվեց և ձեթի մի կան-թիւ, պղնձ է մի ծանր անօթ, որ նոյնպէս ու-նէր իւր վրա նկարներ: Հիանում է բարակ ապակեայ ամանը, որ դրված էր կանթիլի մէջ: Բարակ պղնձէ թիւրքից շինված շիթայի կտորներ էլ դուրս եկան, երեւի նոյն կանթիլի շիթան:

Եւ չեմ կարող նկարագրել այն ուրախու-թիւնը, որ պատճառում է ալ. Մառն իւրա-բանչիւր գիւտ: Յարգիլի գիտնականի համար մի կատարեալ տուն է այն օրը, երբ մի բան է գտնվում աւերակների մէջ: Նա անձկանօք սպասում է այն արձանագրութեան, որի մէջ խօսվելիս լինէր եկեղեցու շինութեան մասին: Բայց փլատակները ուղղակի անխելձ սոս-նութեամբ փորձում են ալ. Մառն համբերու-թիւնը: Մի տեղ, պատի վրա երեւցին մի քանի տառեր արձանագրութեան, բայց ջարդ-ված. գտնվեցին քարի մի քանի մասը կտոր-ներ, որոնց վրա այդ արձանագրութեան մա-սերն էին երևում, բայց ամբողջութիւն կազ-մել նրանցից անկարելի եղաւ: Շատ յոյս նե-րչնչեց, շատ ուրախութիւն պատճառեց վերո-յիշեալ արձանագրութիւնը, որ փորված է սե-ղանի պատի վրա: Պ. Մառը օրէցօր սպասում էր աւելի մեծ արձանագրութեան: Զը գիտեմ, այսօր էլ սպասում է թէ արդէն գտնի է:

Մաղովում եմ, որ գտնված լինի: Անկել լաւ վարձատրութիւն ես չեմ էլ երևակայում այն զրկանքների փոխարեն, որ ալ. Մառը կրում

ցեալ) այրի կնոջ խաթայի կալերի վրա դե-ղած ցորենի մէջ երկու հարուստ կալերը, պատմողի ասելով, բողոքովին գոն գնացին կրակին: Կրակ ձգելու մի այլ փորձ էլ կա-տարվեց 4—5 օր առաջ այդ նոյն կալերում Հաջիվարցի մի հայի ցորենի դէպի նկատ-մամբ, որի ժամանակ այրվեց թաւանի զոն գնացած Հաջիվարցու այդ տեղ փախչած 1000 թէ 2000 խորձ ցորենը:

Յարձակումների և հրդեհագործութիւնների այս օրինակ քառսի մէջ ժողովուրդը համբերում է, տանում է, սպասելով գնեալ նահանգապե-տի Նախիջևանի քաղաք և նրա խօստովների կատարման: Առանց խիստ միջոցների թուրքերը ոչ միայն կողոպտում յետ չեն դարձնի, այլ ևս նորանոր աղէտների պատճառ կը դառնան, ինչպէս այդ կատարվում է նոյն իսկ ներկայ պայմաններում, երբ գիւղերը պաշտպանվում են զինուորների և կողակներիով:

Այսպիսի անմիջեպ երևոյթներ շարքում միջնաբերական են երկու հանգամանքներ: Նախ թշուառ նախիջևանցու դատը պաշտպանելու համար այստեղ գտնվում է ուս փաստաբան Սահմեսովսկին, որը մի առանձին անկեղծու-թեամբ և եռանդով մի քանի երիտասարդ ու-սանողների ջանքով կարգի է բերում և ըն-թացք տալիս այդ արդար դատին: Սահմես-ովսկին աշխատանքներին մասնակից է նաև ուս թղթակից Սինակիչի, այս օրերս աւելա-ցան թիֆլիսից եկած երկու նոր փաստաբան-ներ ևս—Արշակ Առաքելեան և Շահրուգաղեան: Այս սրանց գիւմում է Նախիջևանի և նրա շը-ջակայ գիւղերի թաւանված, սրի ու հրի հն-թարկված հայը, իւր կորուստների իւր զրկանք-ների համար:

Կայ և մի այլ տուն ուր ազատ մտնում է Նախիջևանի և նրա թաւանված գիւղերի հայը իւր ցուրերի համար—այդ յաջողութիւնն է, կամ աւելի ճիշտ Նախիջևանի յաջողութիւն-մա վարդապետի բնակարանը:

Թովմայի բնակարան ենք ասում նրա հա-մար, սր մենք շատ ծանր օրերում շատ ա-ռաջնորդաբաններ ենք տեսել, որոնք իրանց անխիտ վերաբերմունքով զգվանք են առա-ռաջացել. մենք տեսել ենք առաջնորդներ, որոնք իրանց ստամոքսի և դէմքի գեղեցկու-թեան վրա աւելի շատ են մտածել քան ամ-բողջ մի ժողովրդի, որոնք առաջնորդաբանի դէմքը պինդ պինդ փակել են կարօտախն-քի դէմ: Իսկ Թովմայի մի բացառութիւն է, մենք նրա մասին շատ անգամ ենք լսել, բայց այլ էր անձնական ապագայութիւնը: Երկուս-սարգ, շատ հասարակ կեանք վարող մարդ—պարզ վերաբերմունք ամենքի հետ, հարուստ ու աղքատ, քաղաքացի, գիւղացի նոյնն է նրա համար: Յաջողութեան մի բաց դուռն է, որ-տեղից մտան մտնում է իւրաքանչիւրը թէ գիւղացին, թէ թաւանվածը և թէ զրկվածը: Թովմայի մօտենում է իւրաքանչիւրին, լսում է պեղումների վրա:

Տառն օր ես մնացի Անիում և ամեն օր հիացած տեսնում էի թէ ինչ է անում անասն-ման սէրը դէպի գիտութիւնը:

Պ. Մառը վանական կեցութեան կանոններ է դրել թէ իւր և թէ ամենքի համար, որոնք ապրում են հիւրատանը: Ժամի 12-ին ճաշ է, 8 ին, յաճախ և էլ առաջ, դեռ արեւի լոյսով ընթերցել է 10-ին ամենքը բնած են: Այսպէս ապրելով է կարելի լինում ամեն օր տեսնել Անիի հրաշալի վաղ առաւօտները: Ժամի 5-ին, երբ դեռ արեւակ չը կայ, ալ. պրօֆէսո-րը արդէն դրսուցն է և սպասում է իւր բան-ւորներին: Մի բաժակ կաթ է խմում և գնում գործին: Բանուորական օրը 10 ժամ է և այդ ամբողջ ժամանակը նա պիտուհի տեղումն է, բայց երկնքի տակ, սարսափելի փոշու մէջ, եղան մի քանի շատ տաք օրեր, երբ ջերմա-չափը արեւի մէջ 40 աստիճանի էր հասնում: Այս տաքն ու կրակն էլ արհամարհում էր ալ. Մառը և երբէք չէր հեռանում իւր դիրքից, ուր ստուերի կտոր չը կայ, ուր հովանոց ան-գամ չէ բաց անում: Ես մի քանի անգամ ե-ղայ այդ ժամերին նրա մօտ: Տօթը խաղում է, փոշին խեղդում է, իսկ գիտութեան զինուորը իւր պաշտօնին է ծառայում: Եւ ամեն անգամ, երբ ես իմ զարմանքն էի յայտնում, նա ծի-ծաղելով պատմում էր իւր ճանապարհորդու-թիւնը դէպի Սինայ աֆրիկեան անապատների միջով, ուր մի կաթիլ մաքուր, չոր գտնելը անգամ հրաշք է...

Ահա աշխատող, ահա օրինակ: Կամքի այս-պիսի ոյժի, գիտութեան ներշնչած այսպիսի անձնազոհ սիրտը առաջ կարելի է միայն գիտել ինչպիսի: Այս տեսակ աշխատասիրու-թիւնն է բեղմնավորում մարդկային միտքը: Ո՞ւր են մեր աշխատողները: Եթէ գիտութիւն-

համբերութեամբ մինչև վերջը, լսում կըլինու-թիւններ և նոյն իսկ զխաղաղանքներ և ա-ռանց վերջուիւր, մէկին ուղարկում է փա-տարանի մօտ, միւսին բժշկի մօտ, երրորդին ալիւր կամ իւր բաժանողի մօտ և այսպէս անվերջ: Թող մտնի մի բարձր դիրք ունեցող մարդ, Թովմայի չի մօտենայ նրան, մինչև չը վերջացնի իւր խօսքը, շատ անգամ երկար ու ձիգ, վերջին գիւղացու հետ: Զը գիտենք Թովմայի ինչ պակասութիւնների տէր է, մի-այն այն ինչ որ տեսանք մի երկու օրում, նա մի միջնորդութիւն է զուգուրի ենթարկված ժողովրդի համար:

Կարապետ վարդապետը գիւղերից վերա-դարձաւ քաղաք և մի ընդարձակ հեռագրով դիմումն արեց Նապոլէօնին:

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՅԻՑ

Յուլիսի 26-ին

Երեկ երեկոյան Ա. Քալանթարը այս տեղի օրերուց պարտիզ գահիւնում երկուս բազմա-թիւ ունեցիկներին (կային և մի քանի օտա-րազգիներ) ներկայութեամբ դասախօսեց տե-ղական ինքնավարութեան մասին (ՅԵՄԵՏՅՈՒ): Նա հրաւիրեց տեղական հայ ազգայնականութեան լուրջ ուշադրութիւնը առաջիկայ խորհրդակ-ցական ժողովներում դրվելիք կարևոր հարցե-րի մասին՝ նախապատրաստական ժողով կազ-մել, իրանց կարիքների մասին մտածել, որ-պէս զի ապագայ ընդհանուր հասարակական ժողովների առաջարկած հարցերին փոխանակ լուր ունեցիկներ լինելու, իրանց շահաւէտ կար-ծիքները առաջարկեն: Ա. Քալանթարի դասա-խօսութիւնը մի կատարեալ ուղեցոյց ծրա-գիր էր՝ որը ժողովրդին արդէն պատրաս-տում է իւր ապագայ գործունէութեան համար. որովհետև ալ. Քալանթարը շրջափց ժողովրդի ամենազգալաւոր կարիքների մասին, որպիսիք են, հողային, ջրաբաշխական, բժշկական, ծա-նապարհների հաղորդակցութեան, դպրոցա-կան, տնտեսական արդիւնաբերական հարցե-րը և այլն և այլն:

Այնպէս որ ժողովրդին ազատեց աւելի եր-կար մտածելու ժողովարութիւնից: Ունեցիկը հասարակութիւնը ծախհարութեամբ յայտ-նեց իւր շնորհակալութիւնը ալ. դասախօսին:

Դժբաղդ ժողովուրդը: Այժմ քիչ է մնում օգտ-վել ըս սեփական իրաւունքներից, մի համոզ-վիւր քաղաքացու շրջափց խօսքերից. բաւական է որքան դաժնութիւններ կրեցիք, ոչ ոք մի գիշեր տեղի, ըս տրեխներդ չը պիտի վերա-ւորեն կողքի նստած քաղաքացի ինտելի-գենտին կամ հարուստ վաճառականին, նրանք ևս երկար տարիներ տեսնում են ըս թշուառ դրութիւնը, չեն խլի ըս ձայնը, ժողովրդական առանձն ասում է՝ «էլքըր տիրոջ վրա ցաւ կը

նը մեղանում լոկ զարդ չը լինէր, դէրբեր գրաւելու գործիք չը դառնար, ինչիւր արած կը լինէին մինչև այսօր: Ամուր ու մուրաց-կան է մեր մտաւոր աշխարհը ուղղակի այն պատճառով, որ չունենք նահատակվել իմացող աշխատասիրներ: Անցեալ տարի ալ. Մառն հետ Անի էին եկել երկու հայ ուսանողներ, որոնք որպէս լոկ պիտի նրա օգնականներ լինէին: Բայց լին բարի ցանկութիւնը բաւա-կան չէ: Աշխատատեղ լինելու համար պէտք է սովորել, զգալ անկեղծ, տաք սէր դէպի առաքելներ: Ուսանող երիտասարդութեան մէջ, ինչպէս պատմում էր ինձ ալ. Մա-ռը, այդպիսի սէր չը կայ: Հնազանդու-թիւնը, հարեհի պատմագիտութիւնը հիմնա-ւորապէս արհամարհված են և ի՞նչ լինում են անհատներ, որոնք կամենում են իրանց ազգի անցեալ կեանքի հետ ծանօթանալ, այդպիսի-ները լուրջ գիտական նպատակներ չունեն, ուղղում են առանց նախապէս պատրաստվելու, առանց նոյն իսկ հին լեզուն սովորելու, քիչ ու միջ տեղեկութիւններ ստանալ, աւելի աղ-գային մի պարտականութիւն կատարած լի-նելու համար...

Այս տարի ալ. Մառը «օգնականներ» չը բե-րեց, նրանք բողոքովին աւելորդ են: Ինքը միակ արաւ, Անիի բազմաթիւ հարստութիւն-ները վրա աւելացրեց այս նոր, նշանաւոր ե-կեղեցին էլ. Պ. Թորածանեանը արդէն չա-փում էր Գաղիկի շինութիւնը, առանձին կտորները թղթի վրա էր անցկացնում: Շու-տով նա կը պատրաստէ եկեղեցու վերակառ-մութիւնը և ալ. Մառ կը գցէ նրան իւր գե-ղացման, որ մտադիր է աշխատել ներկայաց-նել հնադարական կոմիսային:

Լէօ

տալ», ուրիշ քան ցաւերի կարեւորութիւնը համար ինքը ներկայացնելու և խօսելու հայ գիւղացի:

Տ. Սաթ. Զաքարեան

ՆՅՈՒՅԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թիֆլիսի գաւառապետ իշխան Լ. Գ. Զանգերին ուղարկված է Երևանի նահանգապետի տրամադրութեան տակ նախկին փոխ նահանգապետ Տարապետի փոխարէն:

Որովհետև նախարարները զոգրուած են, որ Բազում կարգի մշտական խանգարումները կարող են վերջնականապէս ոչնչացնել Ռուսաստանի նախարարի արգելադրութեան դրոշմը, այդ պատճառով, Ֆինանսների մինիստրը իր կողմից հեռագրով գրեմ է Կովկասի Փոխարքային և յայտնել, որ անհրաժեշտ ամենաշուտափոյթ միջոցների ձեռնարկել նախահանգրում կարգը վերականգնելու համար:

Թիֆլիսի քաղաքային դոմայի յանձնարարութեանով, ձայնարար Ա. Ս. Բաբոյից, Ի. Մ. Դոլուխանեանից և Ս. Ֆ. Զրէանիկից բաղկացած յատուկ յանձնաժողովը մշակել է քաղաքային ինքնավարութեան մի նոր նախագիծ, որը մաս ժամանակներում ենթարկվելու է դոմայի ընտնութեանը: Այդ նախագիծի գլխաւոր հիմքերը հետևեալն են. 1) լայնացնել ընտնութեան իրաւունքները, 2) հասարակական ինքնավարութեան իրաւունքները, 3) հարկերի սկզբունքը փոխել և հետեւել պարզեցնել հարկաւորութեան ձևերը և 4) քաղաքային ինքնավարութեանը ազատել ընդհանուր պետական հաստատութեանը պահուցումը բոլոր ծախսերից:

Թիֆլիսի վրաց դրամատիկական ընկերութեան նախագահը գրեմ է Կովկասի Փոխարքային և խնդրել, որ պետական թատրոնը զարգացնելու մէջ օր արվել վրաց դրամատիկական ընկերութեանը 125 բուրձի վարձով, ամեն անգամի համար: Փոխարքան համաձայնելով է և յայտնում թատրոնի վարչութեանը, որը պիտուի Փոխարքային, որ այդ բանն ամբողջապէս կախված է Լ. Գ. Դանայից, որն արդէն վարձել է պետական թատրոնը առաջիկայ սեզոնի համար:

Զուարթնոց եկեղեցին հողակոյտերի տակից դուրս հանող խաչի վարդապետը Դաքեանը, որ քաղաքում էր Տաթուլի նահանգը, այս օրերս վերադարձել է քաղաքի:

«Р. Вѣд.» լրագրին Պետերբուրգի հաղորդում են տեղեֆոնով յուլիսի 25-ին. «Երեկ Պետերբուրգում կայացաւ վերջին նիստը: Գրեմ-վում էր Պետական Դոմայի գիւմանը կազմելու հարցը:

Ծովային մինիստրութեան մէջ, ասում է «Н. ЖИЗНЬ» լրագրը, կազմված է մի յատուկ յանձնաժողովում, որը պէտք է մանրամասն վերաքննութեան ենթարկէ մինիստրութեան վերջին տարվայ ամբողջ գործունէութիւնը:

Վորոնցովի գիւղի մօլոկանները վճռել են Գովկասի Փոխարքայի նուիրած 100 բուրձին դարձնել հիմք մի ֆոնդի, որի արդիւնքով պէտք է իրանց գիւղում բացվի կերակնորեայ դպրոց:

Թիֆլիսի համալսարանի աւագների ընտրութիւնները վերջանալու են մինչև օգոստոսի 15-ը, իսկ նրանից յետոյ կը կայանայ արհեստավարների ընդհանուր աւագի ընտրութիւնը:

Շուշու Բէլալական դպրոցի տեսուչ Նշանակված է Թիֆլիսի I գիմնազիայի մաթեմատիկայի ուսուցիչ պ. Մատուրեանը, իսկ նորից դպրոցում գերմաներէն լեզուի ուսուցիչ նշանակված է պ. Մ. Դարաբէկեանը: Անդրկովկասեան ուսուցչական սենյակային թուրքերէն բաժնի ինսպեկտոր պ. Սմիլնովը նշանակված է Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ, իսկ նախկին տեսուչ պ. Զիշինսկին նշանակված է Սօնի ուսուցչական սենյակային վերատեսուչ կամ գերեկտոր:

Պետերբուրգում լուր տարածվեց, որ նախագիծվում է մի նոր հիմնարկութիւն—այն է մինիստրների կաբինէտ: Մտադրութիւն կայ

այդ հիմնարկութեանը յանձնել այն բոլոր օրէնսդրական նախագիծերի նախնական քննութիւնը, որոնք առաջարկվելու են Պետական դոմային:

Հոկտեմբերին տեղի ունենալիք պետական ընտնութիւններին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը իրաւունք է տուել ենթարկել ոչ միայն 4-ը կուրսի ուսանողներին, այլ և նախընթաց տարիներում համալսարանի դասընթացն աւարտածներին: Բանի կոմիտեայի կազմը նորից կը լինի, որպէս և անցեալ դարնալը: Գովկասի նահանգահաները լինելու են իրանց համալսարանների գէկանները:

Բալաշովում, ասում է «Р. Вѣд.» լրագրը, յուլիսի 21-ին ամբար կողոպտեց հապարակախօս Ֆեօդօվի և վաճառական Տարապետի տները. սաստիկ ծեծեց Շիլիկ և Նեկզորով բժիշկներին:

Որովհետև պատերազմի պատճառով ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւունք էր համապատասխան, այդ պատճառով Տոմսիկի ուսուցչական ինստիտուտների շէնքը, որ կիսատ էր. մնացել անցեալ տարվանից, այս տարի էլ վերջացնելու հետք չը կայ, իսկ քաղաքում այդ դպրոցի համար յարմարաւոր վարձով շինութիւն չը լինելու պատճառով, ինստիտուտը դադարեցնելու է դադարեցնելու: Բացի դրանից՝ նոր ու դեռ չը վերջացված շէնքը, գինւորական մինիստրի խնդրեցով և Բարձրագոյն բարեհաճութեանով, յանձնված է գինւորական վարչութեանը մինչև 1906 թ-ի ամիսը, հիւանդ և վերաւոր գինւորների համար բնակարան դարձնելու: Այդ պատճառով, ասում է «Прав. Вѣстник»-ը, առաջիկայ աշնանը Տոմսիկի ուսուցչական ինստիտուտում աշակերտների ընդունելութիւն չէ լինելու:

Թիֆլիսեանակ ա. Ե. Ասպիսովան խնդրել է ներկայացնել Կովկասի դպրոցական շրջանի հոգաբարձութեան որ իրան թոյլատրեն Թիֆլիսում բաց անել մի մասնաւոր պանսիօն մանկապան օրնորների համար: Այդ առիթով տիկ. Ասպիսովան մշակել է որոշ ծրագիր և ներկայացնել Կովկասեան կրթական շրջանի պ. հոգաբարձուին, իսկ այս վերջինը ծրագիրն ուղարկել է Անդրկովկասի մուքտու և շէյխ-ուլ-խալաի բարեհայեցողութեանը:

«Ноб. Обзор» լրագրը հաղորդում է, որ որոշված է Գորու ուսուցչական սենյակային թուրքական բաժնի տեսչի և Գաբուի նահանգի ժողովրդական դպրոցների տեսչի պաշտօնը յանձնել մուսուլմանի: Մուսուլման պատգամաւորութիւնը միջնորդութիւն յարուցած լինելով թէ պէտք է վերակազմել Թիֆլիսում գոյութիւն ունեցող շիա և սիւննի դաւանութիւնների դպրոցները և միացնել նրանց ի մի դպրոց, Փոխարքայի գիւմանտունը հարցրել է այդ մասին հոգաբարձուի կարծիքը, որի կողմից արգելք չէ գտնվել այդ միջնորդութիւնը յարգելու համար:

Գուլթայի համար ջրանցք շինող ընկերութիւնը վճռել է իր արածութիւնը և իրաւունքը տալ քաղաքային ինքնավարութեան:

ՆՈՐ ԲԱՅԱՆՔԻՑԻՑԻՑ մեղ հաղորդում են. «Յուլիսի 21-ին, ժամը 10-ին, թուրքերի դաշին, որ Նուխու և Գանձակի կողմերից ուղարկված է Երևանի նահանգը՝ թուրքերի և հայերի մէջ համաբարձութեան տարածելու համար, քաղաքային աւագի միջնորդութեամբ և գործակալ Արտակ վարդապետի մասնակցութեամբ՝ ժողով կայացնելով, մի քաղաք խօսեց հայ ժողովրդի ներկայութեամբ՝ երկու հարկան ազգերի մէջ սէր և համեմատութիւն պահպանելու մասին: Յայտնելով Գանձակի, Դիլիջանի և միւս տեղերի հայերի և թուրքերի բարեկամական յարաբերութեան մասին, յարգելի դադին շնորհակալութեան արեց մեր ժողովրդին՝ թուրքերի հետ սերտ յարաբերութիւնը չը խախտելու համար մեր գաւառում: Ապա աւելացնելով, որ իրան յանձնարարված է շրջել Երևանի նահանգի բոլոր թուրքերի և ըրքերի մէջ յոյս յայտնեց, որ ինքը կարող կը լինի ազգի յատկապէս մուսուլման տարրի վրա՝ բարեկամական կապերը չը խզելու հայերի հետ:

ՂՈՒԲԱՅԻՑԻՑ մեղ գրում են. «Գաղաքի մօտով հոսում է Դուրա-չայ գետակը, որը բա-

ժանում է հրէաների թաղը քաղաքից: Այդ գետակի վրա շինված է քարէ կամուրջ, որի երկարութիւնը հաւասար է ժողովրդագիտութիւնի Միքայէլեան մեծ կամուրջին: Յուլիսի 19-ին Դուրա-չայ գետակը վարարում է: Դեռ վարարումն տեսնելու համար գնում են մարդիկ, որոնք կամուրջից դալվում են գետակի մեծութիւնով: Յանկարծ կամուրջի երկու քարէ կամուրջ քանդվում է և վրան գտնվող մարդիկ թափվում են կամուրջների հետ ջուր: Կատաղած գետակը ընդու է մարդկանց, սակայն բարեբաղդաբար շատերին հնարաւոր է լինում ազատվել: Հայերից գետակում ընկնում են երկու աղամարդ և մի աղայ, որոնց դուրս են բերում. աղայի ոտները մնացված են: Մարդկային զոհերի թիւը դեռ ևս ճիշդ չայտնի է: Այստեղից 10 վերստ ներքև գետի մի հրէայի գետակը: Այս կամուրջը, ինչպէս ասում են շինել են 1893 թ-ին պետութեան հաշով: Կամուրջի շինելու համար ծախսվել է 80,000 ռ., երեք անգամ էլ նորոգվել է, ծախսվելով մօտ 30,000 ռուբլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Темп» լրագրի Սօֆիայի թղթակիցը սեւամիջի ժամանակ սուլթանի վրա ունեցած արձակելու փորձի առթով ասում է, որ Սօֆիայում գնալով տարածվում է այն հրէշային համոզմունքը, որ սուլթանին սպանելու փորձը կատարվել է ոստիկանութեան պատգամով: Գահաժառանգութեան կարգը փոխելու նպատակով: Գ. Պոլսի բաղադրական դիպլոմատիկական գործակալը—Նաչիկի—Եւանդով բողոքեց թուրքական ոստիկանութեան գործունէութեան դէմ բաղադրական կարգութեան մէջ և յայտնեց, որ սպանութեան այդ փորձը ամենին բաղադրացու ձևերի գործ է: «Manchester Guardian» լրագրի թղթակիցն ևս, որը լաւ ծանօթ է թուրքական գործերին, հաստատում է այդ լուրերը: Մի հերոսացի օֆիցէր—գրում է թղթակիցը,—որը պատանամբ ունի արձակելու վարկեանքին գտնվում էր Գ. Պոլսում, հաւատացնում է, որ սուտ են այն լուրերը, որ իբր թէ պայթիւնը տեղի է ունեցել կառուցված թողնված կամ գցված ուղղութիւն: Պայթիւնը առաջացել է կամ հողում թողնված որ և է պայթուցիկ նիւթից, կամ ստորերկրային որ և է գազերից: Երբ թագրված ակտիւց: Ակտիւ գրված էր սուլթանի սովորական ճանապարհից քսան մէտր հեռավորութեան: Բացի դրանից, սուլթանը սովորականից քանի ժամ աւել մնաց մզկիթում և պայթիւնի ժամանակ կատարելով պաշտօնը անսովոր պատմութիւն պահեց: Իսկոյն պայթիւնից յետոյ սուլթանը հանդիստ արտասանեց, երեք, առաւելուց պատրաստված աֆօրիզմը, որ ինքն վախենում է Աստուծոց, բայց ոչ թէ մարդկանցից: Թղթակիցն ասում է, որ թուրքաց ոստիկանութիւնը ուղղում էր առիթ ստեղծել խտուրթեան նոր միջոցներ գործադրելու համար կամ սուլթանի ժառանգների կամ բերստեանների դէմ:

«Berl. Tageblatt» լրագրի խօսելով, եւապոսական պահանջները բաղկացած են հետեւեալ կէտերից. 1) Եւապոսիան ստանում է մէկ և կէս միլիարդ ռուբլի պատերազմական տուգանք, 2) Եւապոսիան ստանում է Գորէա, Սախալին, Պորտ Արտուր և Դալնի. 3) Եւապոսիային է անցնում արեւելեան-չինական երկաթուղին. 4) Վերջինսուտեղ յայտարարվում է չէզոք: Իսկ իթէ պատերազմը շարունակվի, այն ժամանակ Եւապոսիան կը պահանջէ միացնել իր պետութեան հետ Վաղարշապատը և Պորթօրեան շրջանի և Ուսուրեական երկրի մասերը:

Բերլինից «Р. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Տօկիօից հաղորդում են, որպէս լուր, որ իբր թէ Եւապոսիան, ի միջի այլոց, պահանջում է, որ չէզոք նաւահանգիստներում ազատված ուսուց ըլոր պատերազմական նաւերը յանձնվին Եւապոսիային»:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՈՒՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՆՆԵՑ

28 յուլիսի
ԿՈՎՆԱ, 28 յուլիսի: Երեկ կաթօլիկների գերեզմանատան կայացաւ երկու զոհերի թաղումը, որոնք սպանվել են արեւած դրագունի ձեռքով: Զառուր արտասանվեցին ուսուցչին, իրավիճակի և երբեք չէին հրաշքները անագին քանակութեամբ եկան յայտնել իրանց համակրութիւնը՝ բերստոնեայ բանտրներին: Չեղ. առած միջոցների շնորհիւ ամեն բան անցաւ առանց միջնորդի:

ՊԱՐԻՑ, 28 յուլիսի: Վիտաէն վերադարձաւ երկ նիւտրից հոգեկան գեղեցիկ արածադրութեան մէջ: Այն փաստը, որ Եւապոսիան չէին ներկայացնել իրանց լրագորութիւնները, կրիտիկա է առաջ բերում: Առաջին նիստը ուսուցչական և Եւապոսական շրջանների վրա աւելի շուտ լաւ ապաւորութեան գործեց, թէ և հետեւեցնելու վերաբերմամբ այդ ապաւորութեանը:

Թիւնը շարունակում է մնալ յոռեղատակաւ: Եւապոսիաները յայտնում են, որ Եւապոսիան պահանջելու է գոնէ երկու միլիարդ և Սախալինի գիւղերը: Վիտաէն յայտնեց, որ իթէ Եւապոսիաները պնդեն այդ պայմանները վրա, այն ժամանակ ամեն մի յոյս հաշտութեան մասին կանհետանալ: Տօկիօում գոն մի քանի Եւապոսական լրագորներին ցոյց տուած ընդունելութեամբ: Պաղարկութեան կոնֆէրենցիայի հետեւեցնելու վերաբերմամբ այնտեղ լաւատես տրամադրութիւն է տրեպակտում:

ՆԻԻ, 28 յուլիսի: Եւապոսական պարլամէնտի անգամ Մադիստոն, որ գտնվում է Նիւ-Եօրկում, ասում է, որ Եւապոսիան պահանջում է փողային վարձատրութիւն, Սախալինի, Լեւոգունեան թերակղզու և մանջուրական ճանապարհի գիւղեր, որպէս զի Վաղարշապատը լինի ազատ նաւահանգիստ և Մանջուրեան բաց լինի համաշխարհային առևտրի համար: Կօմուրայի շքախմբի անդամներից մէկը կարծիք յայտնեց, որ 200 միլիօն ֆունտ ծախսը չափազանց չէ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պետարկովեան գործարանի բանուորները հետզհետէ գալիս են աշխատանքի: Մի շարք գործադուներեց յետոյ, այստեղ յուլիսի 28-ին աշխատում էին արդէն 3000 մարդ: Բաց անելով հետեւողական կարգով գործարանները, ընկերութեան վարչութիւնը յոյս ունի, որ մինչև օգոստոսի 15-ի մօտերը կը հասնի բանուորների կատարեալ նօրմային—13000 մարդու: Բոլոր բանուորները ընդունվում են նախկին պայմաններով և նախկին կանօններով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հաստատեց, որ մինիստրական իգական դպրոցներում բժիշկները պաշտօնի համար բաց տեղերը, ըստ չափու հնարաւորութեան, յանձնեն կին բժիշկներին: Պետերբուրգի բնագէտների կայսերական ընկերութիւնը միջնորդութիւն է յարուցանում թոյլ տալ գումարել միջազգային բուսաբանական կոնգրես Պետերբուրգում 1910 թ-ին:

ՆԻԻԿԵՍՏ, 28 յուլիսի: Ռուսաց պատուիրակներից մինը ասաց մամուլի ներկայացուցչին: «Մենք չենք կարող համաձայնել վճարել տուգանք, բայց առաջ գործերին պահանջները միայն ծախսերը փոխելու համար պատրաստ ենք լայն ծախսով գիշորութիւն տանել»:

ՊԱՐԻՑ, 28 յուլիսի: Սպասում են, որ ամերիկական ֆինանսական շրջանները կառավարեն Չինաստանի քաղաքական-ֆինանսական կօմիտեային բանախօսական ճանապարհի վարչութեան առաջիկայ կազմակերպութեան մասին: Միջնորդ հանգիսացող անձինք ամեն շաբաթ գործ են դնում, որպէս զի հարթին լարված յարաբերութիւնները Վաղարշապոսի և Ֆէլիքսի մէջ:

ՆԻԻ, 28 յուլիսի: «Ունեւորում» հիւրանոցի վրա, ուր ապրում են պատուիրակները, ծածանում են ուսուցչական և Եւապոսական գրօղակներ, Վիտաէն յայտնեց: որ Եւապոսական դրօշակը չափազանց աչքի է ընկնում. ուստի Պորտ-Սաւառ ուղարկված Դիւրը կարգադրեց իրենց երկու գրօղակներն ևս:

ԻՆՎՈՒՆ, 27 յուլիսի: Միջինի հեծելազորը շարունակում է գործել արեւելեան Մօնգօլայում: Նա փորձեց յարձակվել Եւապոսիաների ձախ թիկի և կրկին վրա—35 խուճիւղներ փորձեցին այրել Եւապոսական պատանի պահեստները Ինկոսում, բայց սպանվեցին: ՄՕԴԻԻ: Կարճում են, որ Տիւմէնում գրանված ուսուցչի թիւը 50,000 է: Սպասում են ձախառնաւորի Յուրեանգի և Ներիանգի շրջակայքում, որի ժամանակ առաջ շանքերը ուղղված կը լինեն պաշտպանելու Տուսէնը և պահպանելու հաղորդակցութիւն Չանչուգիւրին գծի հետ:

ՇԱՆՆԱՅ, 27 յուլիսի: Կայքենֆուլեց, Նահանգ գաւառում, հաղորդում են, որ չինական կայսերական գործերը այդ գաւառում ապստամբել են և միացել են բերստոնեաների դէմ եղած շարժման: Ապստամբների թիւը 20,000 է. նրանք գրաւեցին Սուչանգիւնը: Կառավարութիւնը ուղարկում է զօրքեր և պատմութիւնը զսպելու համար:

ԼՈՒԻՐԵ, յուլիսի 29-ին: «Դիլիջանի Երեւոն» հաղորդում է պաշտօնական խօսակցութիւնը Վիտաէի հետ: Ռուսաստանը իբր թէ պատրաստ է համաձայնվել Եւապոսական հովանաւորութեան Գորէան վրա, եթէ ուսուցչական ժամանակ չեն լինի ամբողջներ և ուսուցչին կը տրվին այնպիսի իրաւունքներ, ինչպէս և միւս եւրօպացիներին. Ռուսաստանը կը գիշէ Պորտ-Արտուրը, Դալնին, Լեւոգունեան թերակղզին և Մանջուրայի հարաւային շրջանները, ո-

Դոնը գրաւած են հապօնացիները, զորս հետ
և երկաթուղին, և իր տայ ճապարակներն մի
քանի կարեւոր կոնցենտրներ, օրինակ, ձկնոր-
սութիւնը Սախարիւի ափերում: Եթէ հապո-
նացիները կը պահանջեն տուգանք և Սախա-
րիւի զինուորը, հաշտութիւնը դժուար թէ կա-
րելի լինի:

29 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Պաշտօնական լուսանկարներ
հեր Զեմաուր Արեւելից յուլիսի 27-ին չեն
ստացված: Ըստ լրագրական տեղեկութիւն-
ների, Կոնցենտրները նահանգով անցնում են
Եսկուլակի շրջանից և դառնում գոլթօրօրները,
որոնք ցանկացել են հայրենիք վերադառնալու
փոխարէն գնալ Ամերիկա, իրանց դաւանա-
կիցները մաս: Պետերբուրգում գտնվող իշ-
խան Պաւլ Դոլգորուկով յայտնել է Մոսկովայի
նահանգական ղեկավարին վարչութեան, որ
իւր ստացած ձեռն տեղեկութիւնների համա-
ձայն, Պետական Դոմայի ծրագրերը ստորա-
գրված է և յուլիսի 30-ին սպասվում է Նրա
հասարակութիւնը: Պետերբուրգի դատաւա-
սական պալատի ատենակիցները քննարկե-
լով զոնիակ Նիստում յուլիսի 28-ին քննվեցին 12
քաղաքացիներ՝ Նիկիտա Բոլոտով, Բիվակով,
Սմիլնով, Սարախանով, Պոլիսկով, Բոլո-
վի, Ստոլարովի և ուրիշներ: Նրանք ամեն-
բարձրագոյնում էին քննարկում օրէնսդրութեան
106 յօդ. 3 մ. 2 կ. և մինչ 132 յօդ. 2 կետով
Վճիռը յայտնվեց քաղ ղեկավար: Մի քանիսը
դատաւարութեան են մի օրէնք մինչև մի ամիս
բանտարկութեան, չորսի մասին դործը յետա-
ձգված է: Կազմված է ատենակից յանձնաժո-
ղով բարձրաստիճան պաշտօններէից կազմե-
լու համար այն ակտը, որ վերաբերում է ժո-
ղովրդական ներկայացուցչութեան ծրագրի
հրատարակման: Կնից ատենական դպրոցի
հոգաբարձութեան միջնորդութիւնը՝ որ ու-
սումնարանը դարձնի մասնաւոր և Նրա վե-
րաբերմանը դործարարի այս տարվայ յուլիսի
9-ի Միջնորդների կոմիտէի Բարձրագոյն
հաստատված որոշումը ատենակիցները մայրենի
լեզուով աւանդելու մասին, լրակատար ար-
դարութիւն ունեցաւ և յարգվեց: Պորտ-Արտու-
րի անձնատուր լինելու հարցը՝ քննող յանձ-
նաժողովը հարցաքննեց քննիչ շտաբի նախ-
կին զինւոր գեներալ Բէլային: Լուրերին նա-
խելով, Ստեպանը կը հարցաքննվի միայն իբրեւ
միջոց, որովհետև յանձնաժողովը ամենին նը-
պասակ չունի քաղաքային Պորտ-Արտուրի
գործիչներից որ և է մէկի յանցաւորութիւնը,
այլ քննում է միայն Պորտ-Արտուրի անձնա-
տուր լինելու հանգամանքը: Ստեպանի մեղա-
ւորութեան հարցը կարող է լուծել միայն
դատարանը, ինչ որ համար լինի Բարձրա-
գոյն հանձնութիւն, որը կարող է կայանալ մի-
այն տարիներից ոչ առաջ:

ՊՍԻԻԶ, 28 յուլիսի: Այստեղ յոռեղատ տը-
րաւորութիւն է աւելում Պորտաւորի կոն-
ֆերենցիայի հետևանքների մասին, ի նկատի
ունենալով հետգետէն անոյ համարումները եւ-
պօնական պահանջների, մանաւանդ պատե-
րաւական տուգանքի չափազանցութեան մա-
սին: Մարտիլում այսօր ստացված «Էկո դը
Շին» լրագրում հրատարակված է բողոքականի
հրովարտակը, որի մէջ ասված է, «Զի-
նատանը պէտք է օգուտ քաղէ ներկայ
քանակցութիւններից, որպէս զի յետ ստա-
նայ երբեք հիւսիսային նահանգները:—2-ի-
նական պալատը ուղարկել է գաղտնի շը-
քաբերական արտասահմանի բոլոր իր ներ-
կայացուցիչներին, հրամայելով հաղորդել ժա-
մանակ առ ժամանակ օտար կաթնեւո-
նների հայեացքը Ռուսաստանի և Եւրո-
պայի մէջ լինելի հաշտութեան և հիւ-
սիսային երեք նահանգների հարցի մասին:
—Մուկղէի չինական նահանգապետը հրա-
ւերեց Մուկղէի գրաւած հապօնացիներին
վերցնել հապօնական դրօշակը, որովհետև նա-
հանգը պատկանում է Չինաստանին:

ՏՕԿԻՕ, 28 ին յուլիսի: Չմուկղայի մօտ
խորհուրդված «Էկո դը Շին» շրջանը հանել են:
ՍԵՆՈՒԼ, 28 յուլիսի: Կորեացիները սպանում
են և պատժում են հապօնացիներին ղեկ, որով-
հետև վերջիններս յարբուխ են գրաւել գրե-
թէ նրանց ամբողջ բլրիձը: Հիւսիսային նա-
հանգներում արգելի անկարգութիւններ են
ծագել: Եւրոպական զինեւր-նահանգապետը
այնտեղ գործ է ուղարկել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Լրագրական տեղեկութիւն-
ների համաձայն, Եսկուլակի շրջանի գիւղից վե-
րադարձ մի մարդ հաղորդում է, որ գրաֆ
Լիւ Տօլստօյը այժմ իրան շատ լաւ է զգում,
այցելում է իւր հարեան կուլուածատէրերին և
չը նայելով որ նա 77 տարեկան է ձեռք ճա-
նապարհորդում է 15—20 վերստ և շարունա-

կում է գետում լողանալ: Նրա մօտ է լինում
գոհար Զեմաուր, առանց ռուսական իշ-
խան Զեմաուրի նման յիշգրտական շարժման
մասին բացասական կերպով է խօսում և ար-
գումենտներ է փոխարէն մատնացոյց է անում
իւր բազմաթիւ շարադրութիւնների վրա, ո-
րոնք ցոյց են տալիս, որ առաջադիմութիւնը
կարող է կատարվել միայն անհատի ներքին
կատարելագործութեամբ: Բայց ընդհանրապէս
նշանաւոր գրողը խոյս է տալիս նոր շարժման
մասին խօսելու: Լրագրներում նկատողու-
թիւններ էին գետնի վրա ակցիզային վարչու-
թեան մէջ կատարված զեղծումների մասին:
Այդ սօթիւ յուլիսի 26-ին ակցիզային վար-
չութեան մի բազմամարդ ժողով տեղի ունե-
ցաւ, որտեղ խորհրդակցեցին միջոցներ գտնե-
լու այդ զեղծումները պարզելու հասարակա-
կան կարծիքի համար: Միաձայն որոշեցաւ
բարձր վարչութեանը միջնորդել, որ վեր-
ջինս նշանակի և քննութիւն ենթարկի Պե-
տերբուրգի ակցիզային վարչութեան ամբողջ
կազմը: Դրանով կը յայտնվեն զեղծումները
գործողները, փոխը գողացողները և նրանց
մեղաւորութեան աստիճանը, բէլական դատի
ենթարկելու նպատակով:

ՆԱԽԱԳԻՐ՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՔԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐ ՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակի» ներկայ համարի հետ ուղարկվում
է մեր բոլոր բաժանորդներին «Հասկեր» ամ-
սագրի և Մա. Լիսիցեան և Էնկ. հրատա-
րակչական ընկերութեան յայտարարութիւնը:
Ի դիտութիւն պ.պ. Թարգմանիչները յայտա-
րարում են, որ Թարգմանիչ և պատրաստ է
տպագրութեան համար
Pycova
«КАКЪ БОЛГАРЫ ДОВЫЛИ СЕБЪ СВОБОДУ»
(ա. օ.) գրքեր: 3—5

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՈՆԻ

Յաւել պէս պատրաստած պետական դպրոց-
ների համար, (Թրյաւորի մ հոգեւոր և ուսում-
նարանական վարչութիւններից) աշխատաւ-
րութիւն Երեմի Եւսեփ Եւսեփ Եւսեփ:

I. Ստալին գրքով. պատրաստական դասա-
րանների համար «Գլխաւոր աղօթքները (Է-
րանց բացատրութիւններով) և տօները հա-
մառօտ պատմութիւնները 5-դ ապ. դրին է
20 կոպէկ:

II. Երկրորդ գրքով. «Հին-Ռուս» (30 դասե-
րի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյա-
կան դրոյցներով հանդերձ) 3-դ ապ. դրին է
30 կոպէկ:

III. Երրորդ գրքով. «Նոր Ռուս» (32 դա-
սերի վերածած, ուսուցչի կրօնական—բարո-
յական դրոյցներով հանդերձ) գրին 30 կոպէկ:
Գրադաճանների և ուսուցիչների համար 300/0
գինով, առանց ճանապարհածախի: Դիմել
Тифлисъ, прот. Евзиму Ерзинкянцъ կամ
Тифлисъ, Центральный книжный магазинъ.
(Կ.Ե.Զ.) 2—25

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆԸ

Ընդունում է նուէրներ դրամով, զանազան ի-
րեր, հագուստեղէն, տնտեսական և տնային
գործիքներ: Նախընտանի կոտորածից ֆաւորիտ
հայերի օգտին ամեն օր առաւօտեան 9-ից
մինչև 2 ժամը և երեկոյեան 5-ից մինչև 7 ժ.
ընկերութեան գրասենեակում Արաւ. արքային
հրապարակ, սեփական տուն: 4—5

ՉԵԻ ԱՆՈՂ ՄԻ ԿԻՆ

որ աւարտել է Կեդրոնի ակադեմիան և որ
երկար տարիների փորձ ունի, ցանկանում է
պաշտօն ունենալ: Հարցնել Россия հիւրանո-
ցի № 18 սենեակում:

ՄԱՆԿԱԲԱՐՁՆԻՉ

Սօֆիա Ի. Գեորգիտ-Լօկ
Տեղ. փոխել է Կազնայի փողոց № 7,
առաջ իջ. Թումանովայի, Ալեքսանդրիան այ-
գու դիմացը: (Կ.Ե.Զ.) 24—100

Ա Տ Ա Մ Ն Ա Ք Ո Ց Ժ

ՇԵՐԼԱԿԱՆԵԱՆԳ

Ընդունում է Կրկնորդներին ամեն օր առաւ-
տեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6,
իջնաժամը հրապարակ, առան Արդութեան,
բնակարան կապակցեցի բնակարան:

Գ Ժ Ե Կ Ա Պ Ե Տ

Պատրաստում է Կրկնորդներին ամեն օր առաւ-
տեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6,
իջնաժամը հրապարակ, առան Արդութեան,
բնակարան կապակցեցի բնակարան:

Պատրաստում է Կրկնորդներին ամեն օր առաւ-
տեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6,
իջնաժամը հրապարակ, առան Արդութեան,
բնակարան կապակցեցի բնակարան:

Պատրաստում է Կրկնորդներին ամեն օր առաւ-
տեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6,
իջնաժամը հրապարակ, առան Արդութեան,
բնակարան կապակցեցի բնակարան:

ՆԵՐ. Մ. և Ա.
ԹԱՌԱՅԵԱՆՏՆԵՐԻ
գրադաճանոցում (Тифлисъ, Голов. просп.)
ձախույս են հետեւել գրքերը:

Ե. Մ., Լուսադիմի. . . 1 —
Ա.—Դո, Հայրենիքի կարգը. . . 5 —
Որնանի, Ինչ է ազգութիւնը. . . 20 —
Դերենի, Ոչ այս աշխարհից. . . 10 —
Դերենի, Մուսի-ամի. . . 25 —
Մէգրելի, Անմեղ զոն. . . 8 —
Նինչիլի, Գոգիւս Ուղիղի. . . 8 —
Чалхушянъ, Армянскій вопросъ въ
Россіи. . . 10 —
Պրօֆ. Վ. Զոմարա, Տնտեսական և սո-
ցիալ. քաղաքական հարցեր. . . 10 —
Հայրապետութիւն հայոց (նշանաւոր կա-
թողիկոսների գումարը նկարը կենտ-
րօնում ս. էջմիածինը) 50 կ. ճանա-
պարհածախով. . . 75 —
Թիֆլիսից դուրս կարելի է ուղարկել վերա-
դարձարով: Գումարով գնողներին գին 1—1
կը լինի:

Մամուլի տեղ է և շուտով լոյս կը տեսնի
Կ. ԿԱՌԻՑԿՈՒ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
Ա.Զ.ԲԱՅՆՈՒԹԻՒՆ

Թարգմ. Դար. Պապովեանի: 1—2

Վարդուհի և Մարտիրոս Շուտի
ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

(Անապայում, Սև ծովի ափին):
1905 թ. օգոստոսի 10-ից ընդունում է եր-
կու սեռի հայ աշակերտներ, մատչելի պայ-
մաններով:

Պարագմունքները կսկսեն սեպտեմբերի 1-ից:
Պէտք է դիմել՝ Анапа, Шводу.

2—3 Վ. և Մ. Տէրոյեան Շուտ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՒԱՆ

Երկարացում է, որ եթէ քաղաքային դնահա-
տութեան տուրքերից ապուրի ունեցող ան-
ձերը մինչև այս տարվայ օգոստոսի 10-ը չեն
վճարել պարտքերը, քաղաքային ուղարկա-
նալով կը լինի դիմել ստիպողական միջոց-
ների այդ տուրքերը հաւաքելու համար:
2—2

ԴԻՄ 1891 թ. Լաւանին տպագրվելու էր զանազան գոյներով

Ո Գ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

պատկերը, որը այն ժամանակ ինձանից միանգամայն անկախ պատճառով լոյս չը տեսաւ:
Այժմ 14 տարի անցնելուց յետոյ աջողկեց սկսել «Ո Գ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի»-ի տպագրութիւնը:
բայց շատ սակաւաթիւ քանակութեամբ, այն էլ միայն նախապէս բաժանորդ գրողներին
համար. ուստի ցանկացողները դիմելու են Ս. Ստեփանուր, Լուկին ք. զ. № 4, Կ. Ե. Ե.
Вардану Варданяну. Կից և Երեւոյում ամեն ժամանակ, Նախապէս կարելի է ուղար-
կել մի մասը: Պատկերի պատրաստելը շատ դժուար է բարդ լինելու պատճառով տպագր-
վում է արտասահմանում: Գոյների թիւը հասնում է մօտաւորապէս 90-ի, մեծու-
թիւնը է 63X50 սանտիմետր:

«Ո Գ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի»

պատկերը մի և նոյն ժամանակ ծառայելու է որպէս օրինակ կանուայի վրա կարելու համար:
1—4

Գումարները գրաւաճառանցում վաճառվում են

հետեւել գրքերը:

Բարձր վարդապետ, Սալաւոր արեղայի Չուպիցեւոյ պատմութիւն Պարսից 1 ր. 25 կ.

Զօմարա, Տնտեսական և սոցիալ. քաղաքական հարցեր 10 կ.

Համարաճանաչ, Հայաւոր հոգեւ. երգերից 30 կ.

Որնան, Ինչ է ազգութիւնը, Թարգմ. Զարաթոստի 20 կ.

Օսիպով, Մի ամիս Կ. Պոլսում 20 կ.

Բ.Բ. Արքունի, Մանկիկ, առաջին մասը 40 կ.

Բարախանյան, Երկրանի խղր, պատմական դրոյց 10 կ.

Տիրացեան, Մարեր և մարեր, (Համարը մի երգ) 10 կ.

Երկրանյան, Պատուի համար, դրամա 4 գործ. 60 կ.

Երկրանյան, Մուսի-ամի, դրամա 3 գործ. 25 կ.

Երկրանյան, Ոչ այս աշխարհից 10 կ.

Ազրիով, Կանանց հարցը Եւրոպայում 25 կ.

Արապեան, Երկրի ժողովածուի հիմնարկը հատոր 1 րուբ.

Կիւսան. Դոյ, Բանակի ինչպէս ազատեցի 15 կ.

Տօլստօյ, Կրկնորդներին սօստ, Թարգմ. Մ. Մն. Զարաթի 50 կ.

Ռիդգու, Գրքերի ընտրութիւնը 60 կ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖ-
ԼԻՍ, ստացված է և ուղարկվում է բաժանորդ-
ներին

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

Կազմակերպ մեծադիր պատկերը: Բաժանորդա-
գրութիւնից դուրս անպայման օրինակները վա-
ճառվում են Իրիստօյեան կարգով վրա 3 ր.,
Գաթանի վրա տպած եկեղեցիների և ցանկա-
ցողների համար 15 ր. Թիֆլիսից դուրս ցան-
կացողները ճանապարհածախքին վճարում մի
օրինակի համար 50 կ. իսկ մի քանի օրինա-
կի համար որքան կարճեայ ստանալու մի-
ջոցին: Վերադարձ վճարով ցանկացողները վճա-
րել կէսը կանխիկ պէտք ուղարկեն:
Դիմել՝ Тифлисъ, Центральной книжной
торговлѣ (2) 9—10

ՆԵՐ. Մ. և Ա. ԹԱՌԱՅԵԱՆՏՆԵՐԻ

գրադաճանոցում

1) Тифлисъ, Голов. просп. 2) Баку, пр. Па-
рапета.

Ընդունվում են կոմիտայով վաճառելու հա-
մար ամեն տեսակ գրքեր: 2—10

Թարգմանված է և շուտով լոյս կը տեսնի
Կ Ա Ռ Ի Ց Կ Ո Ւ

1) „Возникновение рабочего класса“.
2) „Рабочее движение въ средніе вѣка“.

Թարգմանվում են

3) Дубровский. „Франція, Іюль 1830 года“.
4) Е. Марксъ. „Итоги 48-го года“.

2—6 Կ.Ե. 3. Միլեւսեան

ՆԵՐՄԻՍԵԱՆԱԻՐՏ

Ճինգաւոր հայ ուսուցիչ որոնում է պաշտօն
դպրոցներում. աւանդում է հայոց, ռուսաց
լեզու, պատմութիւն և կրօն: Դիմել Կишиневъ
Караимскій пер. № 10, Арутюну Ордуняну.
(Կ. Ե. Զ.) 5—6

Բ Ժ Ե Կ Ա Պ Ե Տ

Ա. Յ. Բարսեղեան

մեկնեց Կովկասի հանքային ջրերը և անցեալ
տարիներին նման այս ամառը ևս կընդունէ
ներքին և ջրային հիւանդութիւն ունեցողնե-
րին Պետերբուրգում և Եւրասիական մայրա-
քից: (Կ.Ե. Զ.) 39—20

ԴԻՄ 1891 թ. Լաւանին տպագրվելու էր զանազան գոյներով

Ո Գ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

պատկերը, որը այն ժամանակ ինձանից միանգամայն անկախ պատճառով լոյս չը տեսաւ:
Այժմ 14 տարի անցնելուց յետոյ աջողկեց սկսել «Ո Գ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի»-ի տպագրութիւնը:
բայց շատ սակաւաթիւ քանակութեամբ, այն էլ միայն նախապէս բաժանորդ գրողներին
համար. ուստի ցանկացողները դիմելու են Ս. Ստեփանուր, Լուկին ք. զ. № 4, Կ. Ե. Ե.
Вардану Варданяну. Կից և Երեւոյում ամեն ժամանակ, Նախապէս կարելի է ուղար-
կել մի մասը: Պատկերի պատրաստելը շատ դժուար է բարդ լինելու պատճառով տպագր-
վում է արտասահմանում: Գոյների թիւը հասնում է մօտաւորապէս 90-ի, մեծու-
թիւնը է 63X50 սանտիմետր:

«Ո Գ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի»

պատկերը մի և նոյն ժամանակ ծառայելու է որպէս օրինակ կանուայի վրա կարելու համար:
1—4

Գումարները գրաւաճառանցում վաճառվում են

հետեւել գրքերը:

Բարձր վարդապետ, Սալաւոր արեղայի Չուպիցեւոյ պատմութիւն Պարսից 1 ր. 25 կ.